# Մրցույթի հայտարարություն

**«Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

   1) ՀՀ քաղաքացիությունը.

   2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

   1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

   2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

   3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

   4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

   5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2021 թվականի դեկտեմբերի 16-ից մինչև հունվարի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 21-ին՝ ժամը 15:00-ին, «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Արաքս, Դրոյի 6:

Տեղեկությունների համար դիմել

Հեռախոս՝ 094-145-000

Էլ. փոստ՝ araqsimijnakarq.dproc@mail.ru: